

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Օգոստոսի 30-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 89 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր հիսունինը, աշխատանքի տեղավորման՝ քսանինը, առողջարանային ուղեգիր հատկացնելու և տարածքը վաճառելու մասին՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից հիսունյոթին տրվել է դրական լուծում, երկուսը՝ մերժվել է:

Ընթացք է տրվել աշխատանքի տեղավորման մասին հինգ դիմումի, քսանչորս դիմումներ վերցվել են հաշվառման և ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

Բավարարվել է առողջարանային ուղեգիր հատկացնելու մասին դիմումատուի խնդրանքը:

Մերժվել է տարածքը վաճառելու համար աջակցելու մասին դիմումատուի խնդրանքը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ